

# CALFRESH ԾՐԱԳՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ Էջ

## ԿԱՐԵՎՈՐ Ե ԻՄԱՆԱԼ

### ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՀԱՇՎԻ ԴՎ՝

Հաշիվ է բանկում, վարկային միությունում, և այլն, որտեղ CalFresh նպաստներ ստացող ընտանիքը կարող է գումար պահել միայն հետևյալ թույլատրելի ծախսերի համար՝

- Բնակվելու համար տուն գնելը,
- Բիզնես սկսելը, կամ
- Հաշվի տիրոջ ու նրա խնամարկյալների կրթություն կամ աշխատանքի համար ուսուցում: (խնամարկյալները նրանք են, ովքեր կարող են նշվել կամ նշված են որպես խնամարկյալներ, հաշվի տիրոջ դաշնային եկամտահարկի հայտարարագրում):

Նախքան սահմանափակ հաշիվ բացելը, Դուք հնարավոր է ցանկանաք կանխիկ դրամ կամ այլ ռեսուրսներ ունենալ (ինչպես օրինակ՝ բանկային հաշիվներ, արժեթղթեր, անշարժ գույք, և այլն), որոնք չեն գերազանցում Ձեզ մատչելի ռեսուրսների սահմանափակումը: Ահա, թե ինչու.

**Եթե Դուք օգտագործում եք Ձեր սահմանափակ հաշվի(ներ)ի գումարներն արտակարգ իրավիճակների համար, նույնիսկ երբ արտակարգ իրավիճակը կապված է մահվան կամ կյանքին սպառնացող վիճակի հետ, հաշվից գումարի հանումը կհաշվարկվի որպես ռեսուրսի սահմանափակման \$2,000 կամ \$3,250 մաս (եթե կենցաղի առնվազն մեկ անդամը հաշմանդամ է կամ 60 կամ ավելի բարձր տարիքի է):**

### ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՀԱՇՎԻ ԿԱՆՈՆԵՐԸ.

- Հաշիվ բացելու ժամանակահատվածում Դուք պետք է CalFresh նպաստներ ստանաք:
- Թույլ է տրվում ունենալ մեկ սահմանափակ հաշվից ավել:
- Սահմանափակ հաշվում եղած խնայողությունների առավելագույն գումարի սահմանափակում գոյություն չունի:
- Բոլոր սահմանափակ հաշիվներում **եղած** գումարները չեն հաշվարկվում որպես Ձեր ընտանիքի ռեսուրսների սահմանափակման մաս:
- Դուք պետք է ստորագրեք Սահմանափակ հաշվի համաձայնագիրը, **նախքան** հաշիվը կարող է համարվել Սահմանափակ հաշիվ:
- Դուք կարող եք գումար ծախսել միայն թույլատրելի ծախսերի համար:
- Դուք պետք է պահեք սահմանափակ հաշվի(ների) գումարն ու վաստակված որևէ տոկոս **առանձին** Ձեր որևէ այլ հաշվից:
- Սահմանափակ հաշվի(ների) վրա գոյացված տոկոսը պետք է դրվի հաշվի(ների) վրա:
- Դուք պետք է Սահմանափակ հաշվի համաձայնագիր ստորագրեք յուրաքանչյուր Սահմանափակ հաշվի համար:
- Եթե Դուք սահմանափակ հաշիվ ունեք ու դադարեցնում եք CalFresh նպաստներ ստանալը, ապա հաշվի գումարները կարող են հաշվարկվել որպես Ձեր ունեցվածքի ու ռեսուրսների մի մաս, եթե կրկին դիմեք նպաստների համար:

**ՀԱՇՎԻՑ ՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՁԵԿՈՒՑՈՒՄ**

- **Կես տարին մեկ գեկուցող կենցաղներ**
  - Կես տարվա ժամանակահատվածում հաշվի գումարները հանելը պետք է գեկուցել մինչև Ձեր հաջորդ եկամտի գեկուցը (SAR 7) կամ վերավկայագրումը:
  - Վարչաշրջանը կվերագնահատի Ձեր ռեսուրսները կես տարվա գեկուցը ստանալուց ու կորոշի, թե արդյոք հանումը թույլատրելի ծախսի համար էր, թե ոչ: Եթե Ձեր ռեսուրսները պակաս են ռեսուրսների սահմանափակումից (\$2,000/\$3,250), ապա Դուք կշարունակեք որակավորվել նպաստների համար, եթե այլապես իրավասու եք դրանց համար:
- **Փոփոխություն գեկուցող կենցաղներ**
  - Ձեր Սահմանափակ հաշվից հանված գումարը պետք է գեկուցվի այդ գումարը հանելու ամսաթվից 10 օրվա ընթացքում:
  - Վարչաշրջանը կդիտարկի ռեսուրսների սահմանափակումը գեկուցը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:
  - Գումարի հանումի պատճառը կորոշի իրավասության շարունակությունը:
  - Եթե Ձեր ռեսուրսները պակաս են ռեսուրսների սահմանափակումից (\$2,000/\$3,250), ապա Դուք կշարունակեք որակավորվել նպաստների համար, եթե այլապես իրավասու եք դրանց համար:

**ԾԱԽՍԵՐ**

- **Բնակության համար տուն գնելը.**

Դուք կարող եք Սահմանափակ հաշվից գումարներ ծախսել հետևյալի համար՝

  - Ավանդներ, վարձեր, գնման ժամանակ կատարված մասնակի վճարում, գլխավոր վճարում,
  - Գործարկը փակելու ծախսեր,
  - Վերանորոգում ու տան սարքեր:

Դուք չեք կարող Սահմանափակ հաշվից գումարներ ծախսել հետևյալի համար՝

  - Կահույքի գնումներ,
  - Կենցաղի ապրանքներ:
- **Հ ա շ վ ի տ ի ռ ո ջ ( տ Ե Ր Ե Ր ի ) ու ն ր ա ի ն ա մ ար կ յ ա լ ի ( ն Ե Ր ի ) կ ր թ ու թ յ ո լ ն կ ամ ա շ խ ա տ ա ն ջ ի հ ամ ար ու ս ու ը ու մ .**

Դուք կարող եք Սահմանափակ հաշվից գումարներ ծախսել հետևյալի համար՝

  - Վարձեր, ուսումնավարձ, գրքեր, դպրոցական պիտույքներ, սարքավորում, հատուկ հագուստ,
  - Ուսանողի բնակեցում ու մեքենա,
  - Դպրոց/մասնագիտական ուսուցման վայր գնալու ու վերադառնալու փոխադրամիջոց,
  - Դպրոց հաճախելու համար անհրաժեշտ երեխաների ինսամքի ծառայություններ:

**ԾԱԽՍԵՐ (ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ).**

- **Նոր բիզնես սկսելը.**

Դուք կարող եք Սահմանափակ հաշվից գումարներ ծախսել հետևյալի համար՝

  - Բիզնես սարքավորում գնել, վերանորոգել ու պահպանել,
  - Գործիքներ, համազգեստ, այլ պաշտպանիչ կամ պահանջվող հագուստ ու կոշիկներ,
  - Բիզնես ունեցվածքի կամ տևական օգտագործման ապրանքների վարկի գլխավոր գումարի ու տոկոսի վճարում,
  - Գրասենյակի կամ հարկի վարձակալություն ու կոմունալ ծառայությունների համար վճարում,
  - Աշխատողների աշխատավարձեր,
  - Գույքագրում, ուղարկում ու առաքման ծախսեր,
  - Բիզնես վարձեր, հարկեր, ապահովագրություն, հաշվապահություն կամ այլ մասնագիտական ծառայություններ:

Դուք չեք կարող Սահմանափակ հաշվից գումարներ ծախսել հետևյալի համար՝

  - Անձնական ծախսեր, ինչպես օրինակ՝ գլարձանքը:

**ԱՊԱՑՈՒՅՑ**

Դուք պետք է վարչաշրջանին ապացույց ներկայացնեք, երբ բացում եք Սահմանափակ հաշիվ ու Սահմանափակ հաշվից(ներից) գումար եք հանում:

- **Գումարների հաստատման և/կամ հանման ապացույցի օրինակներից են հետևյալը՝**
  - Բանկային հաշվեգրքույկ, բանկի հաշվետվություն կամ անդորրագիր բանկից, վարկային միությունից, և այլն, որը ցույց է տալիս բանկի անվանումն ու հասցեն, ինչպես նաև հաշվի(ների) վրա նշված անունը, հաշվի համարը(ները), և
  - Հաշվի մնացորդներն ու գործունեությունը՝ սկսած Սահմանափակ հաշվի համաձայնագիրը ստորագրելու ամսաթվից:
- **Գումարները ծախսելու ապացույցի օրինակներից են՝**
  - Չեղարկված չեկ,
  - Ստորագրված հաշվետվություն ապրանքների կամ ծառայությունների տրամադրողից, որը ցույց է տալիս վճարված ծախսի(երի) տեսակն ու գումարը,
  - Անդորրագիր,
  - Սահմանափակ հաշվի բանկային մնացորդի հաշվետվություն: